

**ՇԱՐԺՈՂԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈՒԽՈՒՑՄԱՆ ՄԻ ՔԱՆԻ  
ԱՊԱԽԱՎԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ<sup>51</sup>**

**Սերգեյ Գրիգորյան**

**Քանալի բառեր՝** գործողություններ, շարժողական հմտություն, շարժողական կարողություն, ուսուցում, դասավանդման մեթոդիկա, ֆիզիկական դաստիարակություն, ֆիզիկական բեռնվածություն, վարժություններ

Համրակրթական դպրոցների ֆիզկուլտուրայի ուսուցիչներին անհրաժեշտ է հմանալ ֆիզիկական կուլտուրայի առանցքը կազմող շարժողական գործողությունների ուսուցման մեթոդիկայի ու կիրառման առանձնահատկությունները:

Համրակրթության ոլորտում ֆիզիկական դաստիարակության արդյունավետության, մանկավարժական տեխնոլոգիաների մշակման ուղղությամբ լուրջ հետազոտություններ են իրականացրել բազմաթիվ հեղինակներ (Վ. Վ. Բալսկիչ, Վ. Վ. Բելինովիչ, Ս. Ս. Բոգեն, Ս. Ա. Վիլինսկի և ե. և. Լիտվինով, Լ. Վ. Կոլկովա, Յուլ. Դ. Ժելեզյակ, Պ. Կ. Պետրով, Զ. Ի. Կուզնեցովա, Ֆ. Զ. Մեյերսոն, Ս. Դ. Նեերկովիչ, Ա. Ա. Տեր-Յովհաննիսյան և ուրիշներ): Շարժողական կարողությունների և հմտությունների, դրանց վեգետատիվ բաղադրիչների ծնավորվածության և դրա հետ մեկտեղ ֆիզիկական բեռնվածության միջոցով առողջության ամրապնդմանը հասնելու խնդիրներին, միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների սովորողների ֆիզիկական դաստիարակության մանկավարժական տեխնոլոգիաներին է նվիրված Լ. Գ. Գևորգյանի ատենախոսությունը[1]:

Դպրոցականների առողջ ապրելակերպի, հատկապես աճող օրգանիզմի բնականուն զարգացման տեսակետից պահանջված է նրանց շարժողական գործառույթների զարգացումը:

Շարժողական գործողությունների ուսուցման գործընթացի ընդհանուր և մասնագիտական առանձնահատկությունները բխում են ուսուցման կոմկրետ խնդիրից, ուսումնական մյութի մատուցման և յուրացման ունակություններից, դասավանդման մեթոդիկայից:

Ֆիզիկական դաստիարակության հիմնական ուղղություններից է շարժողական գործողությունների ուսուցումը: Այն մանկավարժական գործընթաց է, ուստի ուսուցման հիմնահարցերի առնչվելիս կարելի է կողմնորոշվել մանկավարժության սկզբունքներով և մեթոդներով: Լ. Գ. Գևորգյանը եղանակացրել է, որ ֆիզիկական կրթության և դաստիարակության համակարգում գործում են ուսուցման հիմնական օրինաչափություններն արտացոլող ընդհանուր մանկավարժական սկզբունքները (դիդակտիկական սկզբունքներ), որոնց ֆիզիկական դաստիարակության գործընթացում ներառում են մի շարք բազմագործառնային մեթոդիկաներ, առանց որոնց հնարավոր չէ բարձր մակարդակով լուծել ուսուցման ու դաստիարակության խնդիրները[2]:

Ֆիզիկական դաստիարակության գործընթացում ուսուցումը ոչ միայն կազմակերպված գործունեություն է, այլև հասուն գիտելիքներ, շարժողական գործողություններ սովորեցնելու և յուրացնելու համակարգ, որը նպատակատիղված է մարդու ֆիզիկական ու հոգեկան կատարելությանը հասնելուն:

Ֆիզիկական դաստիարակության գործընթացում ուսուցման վերջնարդյունքը ֆիզիկական կրթությունն է: Արցախի ազգաբնակչության առողջ ապրելակերպի գործուն ֆիզիկական դաստիարակության և բնական առողջարարական միջոցների կարևո-

<sup>51</sup> Հոդվածն ընդունվել է 08.12.17:

Հոդվածը տպագրության է երաշխավորել ԱրՊՀ ֆիզ.դաստիարակության ամբիոնը:

## ՄԵԽՐՈԴ ՄԱՀՏՈՅ ՀԱՍԱԼԱՐԱՆԻ ԼՐԱՏՈՒ 2018

րուրյունը տեսական աղբյուրների հիման վրա վերլուծել և ցույց են տվել մ.գ.թ., դոցենտ Վ. Ա. Դարբությունյանը և ասպիրանտ Ս. Ի. Դայրապետյանը[3]:

Ծարժողական գործողությունների ուսուցման մի շարք ընդհանուր և մասնագիտական առանձնահատկություններից Վ. Բելինովիչն առանձնացրել է ա) ուսուցչի մասնագիտական վարպետությունը, ինչի շնորհիվ ուսուցման գործընթացում ուսուցանվող իասնում է առավելագույն հաջողության, բ) ուսուցման գործընթացի կառուցումը ուսուցանվողների տարիքային առանձնահատկությունների, ինչպես նաև ուսուցման հանդեպ նրանց ունեցած ծիրքի հիման վրա, զ) գիտելիքների և հնտությունների ծևավորման կապակցումը ուսուցանվողների մտավոր և ֆիզիկական կարողությունների հետ, դ) ուսուցման գործընթացի դաստիարակչական բնույթը[4]:

Գիտելիքների, կարողությունների, հնտությունների ծևավորումն անմիջականորեն կապված է ուսուցանվողի ֆիզիկական զարգացման խնդիրների հետ, ուստի ֆիզիկական դաստիարակության պարապմունքների կազմակերպումը և ուսուցման մեթոդիկան ունեմն ինքնատիկ բնույթ առողջարար և հիգիեմիկ ուղղվածությամբ:

Դաշվի առնելով ուսուցանվողի ֆիզիկական զարգացման առանձնահատկությունները՝ անհրաժեշտ է ուսումնական նյութը համապատասխանեցնել հատկապես աշակերտների ֆիզիկական հնարավորություններին, ըստ այդ՝ ընտրել ուսուցման մեթոդը: Այստեղից էլ առաջանում է ֆիզիկական դաստիարակության գործընթացում ֆիզիկական բեռնվածության հիման վրա դասի ծիշտ կառուցման պահանջը:

Ծարժողական հնտության ծևավորումը կախված է զգայական ապրումներից (իմա՝ ուսուցանվողը ինչպես է պատկերացնում շարժումը), որոնցով պայմանավորված է ուսուցման մեթոդիկայի ընտրությունը:

Գործնականում արդարացվել են հետևյալ մոտեցումները.

1. Նախ՝ ուսուցանել հասարակ, տարրական շարժումների կառավարումը, որոնց հիման վրա հետաքայում ավելի բարդ, շարժողական գործողությունները:

2. Ուսուցանել առանձին շարժողական հատկությունների մշակմանը նպաստող շարժողական գործողություններ:

3. Զևավորել և կատարելագործել այն հիմնական կարողություններն ու հնտությունները, որոնք անհրաժեշտ են առօրյա կյանքում, աշխատանքային գործունեության մեջ, սպորտում և այլ ոլորտներում:

Նշված խնդիրների բնույթից, ինչպես նաև ուսուցանվող գործողության առանձնահատկություններից բխում են ուսուցման գործընթացի մի շարք առանձնահատկություններ: Ուսուցանվող շարժողական խնդիրի բարդությամբ է պայմանավորված նաև ուսուցման վրա ծախսած ժամանակը: Ուսուցման գործընթացի կազմակերպման մեթոդիկան պայմանավորված է ծևավորվող գործողության կառուցվածքային բարդությամբ (տվյալ շարժման փուլերի քանակը, շարժման կենսատիմամիկային ներկայացվող պահանջները, ուսուցանվող շարժման ռիթմիկ կառուցվածքը, ուսուցանվողի բնածին կարողությունները և այլն):

Եթե ուսուցանվում է տարրական վարժություն, ապա հատուկ վարժությունների միջոցով նախօրոր շարժողական հատկություններ մշակելու կարիք չկա: Տվյալ դեպքում ուսուցման արդյունավետությունը պայմանավորված է ընտրված մեթոդով: Վարժությունը կրկնելու հաճախակիությունն ու քանակը ուղղի համեմատական են շարժողական հնտության կատարելագործման արագությանը: Այն գործողությունները, որոնց կատարելությունը պահանջում է առանձին շարժողական հատկությունների առավելագույն ներդրում, հնարավոր չէ ուսուցանել առանց համապատասխան շարժողական հատկության մշակման: Անհրաժեշտ է ստեղծել նախապատրաստական վարժությունների համակարգ, կիրառել տարրեր մոտեցումներ և այլն: Պետք է գիտակցել, որ շարժողական հնտությունը պետք չէ հասցնել կատարելագործման ամենաբարձր աստիճանի, քանի որ այն անընդհատ ծևափոխվում է՝ շարժողական հատկությունների, ինչպես նաև շարժման տեխնիկայի հետագա կատարելագործմանը գուգընթաց:

## ՄԵԽՐՈԴ ՄԱՀՏՈՒՅ ՀԱՍԱԼԱՐԱՆԻ ԼՐԱՏՈՒ 2018

Մարզական գործունեությանը հատուկ է շարժումների տեխնիկայի անրնդիատ կատարելագործումը: Ուսուցման գործընթացը խիստ ստեղծագործական և անհատական բնույթ է կրում:

Ենտագյում շարժողական գործողության բազմաթիվ կրկնությունները, որոնք վարժվողի համար դառնում են սովորական, կոռորդինացիոն մեխանիզմներն անընդհատ ավտոմատացվում են և շարժողական կարողությունը վերափոխվում է հմտությամբ: Շարժողական հմտությունը կարելի է բնորոշել՝ որպես շարժողական գործողության տեխնիկայի տիրապետման աստիճան, որի ժամանակ շարժումների կառավարումն ունի բարձր հուսալիություն: Շարժողական հմտության ծևավորման հոգեբանական-մանկավարժական առանձնահատկությունները սահմանել է Վ. Վ. Բելինովիցը: Նրա կարծիքով հմտության ամենանկատելի առանձնահատկությունը պետք է համարել շարժման ավտոմատացումը՝ զուգորդված գիտակցական հսկողությամբ[5]:

Ֆիզիկական դաստիարակության գործընթացում ինչպես շարժողական կարողությունը, այնպես էլ հմտությունն ունեն իրենց առանձին դերը:

Շարժողական կարողությունն ունի մեծ կրթական դեր, քանի որ նրա հիմքում ընկած է ակտիվ ստեղծագործական աշխատանքը (մտածողությունը), որն ուղղված է շարժման վերլուծությանը: Շարժողական կարողությունների կրթական դերի մասին առաջին ամգամ խոսել է Լ. Պ. Լեսգաֆտը: Դեռևս երկու հարյուրամյակ առաջ կարևորելով մարդու հոգեշարժողական ընդունակությունների գիտական մշակումն ու զարգացումը Ի. Ս. Սեչենովը[6] և Պ. Ֆ. Լեսգաֆտը[7] մատնանշել են ֆիզիկական և հոգեկան ոլորտների միասնականությունը:

Շարժողական հմտության բնորոշ գծերն են

1. Դնտության ամենաարժեքավոր կողմը գիտակցական ազատ հսկողությամբ շարժումների ավտոմատ կատարումն է:

2. Դնտությանը զուգահեռ վարժվողի մոտ առաջ է զալիս շարժումների ընկայման մասնագիտական զգացողություն «ժամանակի զգացում», «Գնդակի զգալը» և այլն:

3. Դնտություն ծեռք բերելիս մեծանում է շարժողական գործողության հուսալիությունը, այսինքն՝ ոչ նպաստավոր պայմաններում(հոգեբանական վիճակ, վախ, հոգնածություն, անսովոր միջավայր և այլն) շարժման արդյունավետության պահպանումը:

Կատարելագործված հմտությունը մարդու մոտ պահպանվում է շատ երկար: Սա ցայտուն երևում է սպորտում: Սպորտից տևական ժամանակ հեռացած մարզիկը անհրաժեշտության դեպքում կարող է ցուցադրել տվյալ շարժման տեխնիկան:

Դպրոցականներին առավել անհրաժեշտ են կիրառական հմտությունները (վագքը, ցատկերը, մետումները):

Շարժողական հմտության հիմքում ընկած է գլխուղեղի մեծ կիսագնդերում դիմամիկ ստերեոտիպի ծևավորումը: Այն պետք է դիտել ֆունկցիոնալ համակարգի այնպիսի վիճակ, որը առաջանում է շարժողական գործողության բազմաթիվ կրկնումների շնորհիվ: Դենց դրանով են պայմանավորված շարժողական գործողությունները կատարելիս արագ որոշում ընդունելը և շարժում կատարելը:

Շարժողական գործողության ուսուցման գործընթացում էական նշանակություն ունի հմտության փոխադրումը: Դատկապես ուսուցման սկզբնական փուլում ծեռք բերած հմտությունը խթանում է արագ և արդյունավետ ծևավորելու այլ հմտություն (օրինակ, փոքր գնդակի նետման հմտությունն օգնում է նոնակի նետմանը):

Դնտության դրական փոխադրումը տեղի է ունենում այն ժամանակ, երբ ուսուցանվող շարժողական գործողություններն իրենց կառուցվածքով համընկնում են: Դենց դրանով էլ պայմանավորված է դրական և բացասական փոխադրումը:

Ֆիզիոլոգիական տեսակետից փոխադրումը պայմանավորված է նրանով, որ գլխուղեղում ստեղծվում են պատրաստի կոռորդինացիոն կապեր, որոնց համընկմանը էլ պայմանավորված է դրական կամ բացասական փոխադրումը:

## ՄԵԽՐՈԴ ՄԱՀՏՈՅ ՀԱՍՏԻԱՐԱԿԻ ԼՐԱՏՈՒ 2018

Ֆիզիկական դաստիարակության գործընթացում ուսուցման առանձնահատկությունների են շարժողական կարողությունների և հնտությունների ձևավորումը, ինչպես նաև մարդու շարժողական կամ ֆիզիկական հատկությունների նշակումը:

Դրա համար էլ պարապունքն անհրաժեշտ է շեշտադրել և շարժողական հնտությունների ձևավորման ու շարժողական հատկությունների մշակման վրա: Ուրեմն ուսուցման գործընթացում առաջ է գալիս ֆիզիկական դաստիարակության տարրեր կողմերի միասնությունը, որովհետև նրանց զարգացման օրինաչափությունները փոխկապակցված են:

Ֆիզիկական դաստիարակության երկու հիմնական կողմերից տարրերում են շարժումների ուսուցման և ֆիզիկական կամ շարժողական հատկությունների մշակման մեթոդներ:

Մեթոդիկայի այս երկու խոշոր բաժիններն ունեն ինչպես ընդհանուր, այնպես էլ միջանցից տարրերվող գծեր: Շարժումների ուսուցման մեթոդիկայի առանձնահատկությունները պայմանավորված են այնպիսի օրինաչափություններով, որոնց հիմնան վրա ձևավորվում են շարժողական կարողությունները, հնտությունները և նրանց առնչվող գիտելիքները: Այս առումով կարևորվում է ֆիզիկական վարժության տեխնիկայի ուսուցման, ամրապնդման և կատարելագործման նախնական ուղիների ընտրությունը:

Ֆիզիկական հատկությունների մշակման մեթոդիկան ունի իր կառավարման օրինաչափությունները: Մեթոդական հիմնախնդիրը մկանային ուժի, արագաշարժության, դիմացկունության և այլ շարժողական հատկությունների մշակումն արդյունավետորեն ապահովող միջոցների, մեթոդների, հնարքների հերթականության որոշումն է: Շարժողական գործողությունների ուսուցման գործընթացի անհրաժեշտ պայմանը շարժողական հատկությունների մշակման բարձր մակարդակն է, որն ուսուցումը դուրացնելու, հետևաբար շարժողական հնտության ճեղքերումը հեշտացնելու գրավականն է:

Շարժումների ուսուցումը և շարժողական հատկությունների մշակումը երեմն համընկում են, քանի որ նրանց օրինաչափությունները միասնական են[8]:

Յուրահատուկ սկզբունք է շարժողական գործողության սկզբնական ուսուցումը հեշտացված պայմաններում և համեմատաբար փոքր ֆիզիկական բեռնվածությամբ: Իսկ շարժողական հատկությունների մշակման հիմնական օրինաչափություններից է բեռնվածության ծավալի ու լարվածության աստիճանական և անընդհատ աճը: L. Գ. Գևորգյանը ցույց է տվել, որ շարժողական ընդունակությունների արագաշարժության, ուժի, ծկունության մակարդակի զարգացման նկատմամբ օրգանիզմի ֆիզիկական բեռնվածության հարումարդկանության մակարդակը կախված է օրգանիզմի տարիքին առանձնահատկություններից[9]:

Մասնագետները ուշադրություն են հրավիրում նաև կրտսեր դպրոցականների ֆիզիկական դաստիարակության գործընթացում շարժողական անհամաչափության հարթեցման նոր ուղղության ներդրման վրա նապատակ ունենալով բարելավել նրանց առողջությունը և ապահովել տարրեր շարժողական ընդունակությունների ներդաշնակ զարգացումը [10]:

Այս կամ այն շարժողական խնդիրը լուծելու համար վարժվողից պահանջվում է շարժողական հատկությունների դրսևորման որոշակի մակարդակ: Ընդ որում, շարժումների յուրաքանչյուր խումբ պահանջում է տարրեր շարժողական հատկությունների դրսւորում [11]: Այսպես՝ ցատկելը, «կամուրջ դրություն» ընդունելը կամ գնդակ նետելը սովորելու համար աշակերտներից պահանջվում է մկանային ուժի, արագաշարժության, ծկունության որոշակի մակարդակ: Տվյալ շարժողական գործողությունն արագ և արդյունավետ յուրացնելու գործում այդ հատկությունների և դրանց դերի մասին նախօրոք իրազեկելով աշակերտներին՝ իմ պրակտիկայում ակներև արդյունքների եմ հասել ուսուցման գործընթացում: Այս կամ այն շարժողական հատկության ցածր մակարդակի դեպքում մինչև կոնկրետ շարժողական գործողության ուսուցման անցնելը վաղորդ կազմակերպել եմ ընդհանուր ֆիզիկական պատրաստության ուղղվածություն ունեցող պարապմունքներ: Գիտակցել եմ, որ ուսուցման սկզբնական փուլում երե-

## ՄԵԽՐՈԴ ՄԱՀՏՈՅ ՀԱՍԱՍԱՐԱՆԻ ԼՐԱՏՈՒ 2018

Խայի ամկարողությունն առաջին հերթին պայմանավորված է շարժողական հատկությունների ոչ բավարար վիճակով:

Երկրորդ նախադրյալն ուսուցանվողի շարժողական փորձն է (այդ թվում՝ կոորդինացիոն պատրաստությունը):

Մի շարք ֆիզիկական վարժությունների տեխնիկան ուսուցանելիս վաղօրոք անհրաժեշտ է ստեղծել այսպես կոչված բազային շարժողական հիմք: Այսինքն ուսուցանվողի մոտ հնարավորինս անհրաժեշտ է ձևավորել ընդհանուր շարժողական կարողություններ, որոնք խթանում են հիմնական շարժողական գործողության տեխնիկայի յուրացմանը:

Երրորդ նախադրյալն ուսուցմանը հեղերանակամային պատրաստրաստվածությունն է: Եթե ուսուցանվում են այնպիսի շարժողական գործողություններ, որոնք կապված են բացասական տարրեր հոլոգերի հետ (վախ, վտանգ, վնասվածք), անհրաժեշտ է վաղօրոք ձևավորել դրական հատկանշներ: Դրա համար շարժողական գործողությունները պետք է կատարվեն հեշտացված պայմաններում:

Բարդ շարժողական գործողությունների ուսուցման ամենամեծ հիմնախնդիրը դրան պատրաստ լինելն է: Այն լուծվում է գործընթացում դիդակտիկ սկզբունքների մատչելիության և անհատականության, սիստեմայնության և պահանջների աստիճանական աճի նպատակասալաց կիրառմամբ: Յիմնահարցի լուծնամը նպաստում է նաև ժամանակակից ծրագրավորված ուսուցումը:

Ուսուցման փուլերի արդյունավետությունը պայմանավորված է նաև ուսուցանվողի շարժառիթավորմամբ: Եթե ուսուցանվողը չունի դրական դրդապատճառ ուսուցման օբյեկտի նկատմամբ, ապա նման ուսուցումը անարդյունավետ է: Անկասկած, որքան շատ են աշակերտների գիտելիքները ֆիզիկական կուլտուրայի և սպորտի մասին, այնքան նրանց մոտ զարգանում է շարժողական գործունեության նտածողական բաղադրամասը, այն է բարձր են շարժողական կարողությունների և հնտությունների յուրացումը, արդյունքները, շարժողական ընդունակությունների մշակումը, ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պարագնունքների հանդեպ հետաքրքրության զարգացումը[12]:

Կարժվողների պատրաստականությունից, ինչպես նաև գործողության տեխնիկայի բարդությունից բխում են ուսուցանվող գործողության մասին ընդհանուր պատկերացում կազմելու, տվյալ շարժման տեխնիկայի հետ կապված գիտելիքներ տալու, ուսուցանվողի չտիրապետած շարժմանը կամ նրա առանձին բաղադրիչներին ուշադրություն դարձնելու, շարժման դիմու ուսուցանելու, ավելորդ շարժումները և վարժությունը ձևափոխող կոպիտ սխալները վերացնելու և մասնակի մանկավարժական այլ խնդիրներ:

Քանի որ յուրաքանչյուր շարժողական գործողություն ունի իր մեխանիզմը, անհրաժեշտ է ինաստավորել այն ինչպես ամրողությամբ, այնպես էլ մասնակի: Դրան հասնում են հիմնականում խոսքի կամ էլ գործողության ցուցադրման մեթոդներով: Դրանցով է հնարավոր ինաստավորել ուսուցանվող գործողության նպատակը, խնդիրները, նաև անապահությունը կատարելապես շատ կարևոր է ցուցադրական միջոցների (տեսագրությունների, կինոնկարների) կիրառումը:

Գործողության կատարելապես ցուցադրումից բացի՝ ուսուցման արդյունավետությունը պայմանավորված է բացատրությունը ցուցադրմամբ գուցորդելու հնտությամբ: Այս արումով շատ կարևոր է ցուցադրական միջոցների (տեսագրությունների, կինոնկարների) կիրառումը:

Սկզբնական կատարման ժամանակ բարդ շարժողական գործողությունները պարզեցման նպատակով մասնասում են և կիրառում օժանդակ միջոցներ: Եթե ուսուցանվողը գործողությունը համեմատաբար բարդ չէ, նպատակահարմար է այն ուսուցանել ամրողական եղանակով, մասնական, որ որոշ ֆիզիկական վարժություններ հնարավոր չեն մասնատել:

L. Մատվեևի կարծիքով շարժողական գործողության կատարման նախնական փորձերը, անգամ եթե ուսուցանվողի մոտ դրանք անհաջող են, ունեն մեծ դիդակտիկ

## ՄԵՐՐՈԴ ՄԱՀՏՈՅ ՀԱՍԱՍՏԱՐԱՆԻ ԼՐԱՏՈՒ 2018

արժեք, քանի որ վարժվողը գնահատում է սեփական հնարավորությունները, ինչը անհրաժեշտ հիմք է անհատական ուսուցման մեթոդիկան ծզգրտելու համար[13]:

Ուսուցման առաջին փուլում վարժությունների կրկնումը բազմաթիվ լինել չի կարող, քանի որ առաջ եկող հոգնածությունը խստ բացասական ազդեցություն է ունենում: Մյուս կողմից պարապմունքների միջև ընկած հանգիստն էլ տևական լինել չի կարող: Այս դեպքում էլ ճեռք բերած շարժողական ռեֆլեքսները կարող են մարել:

Շարժողական գործողությունների նախնական ուսուցման փուլում շատ կարևոր է սեփական շարժումների կառավարումը տարածության մեջ, շարժումների ծիցու ռիթմի (ուժերի ծիցու տեղաբաշխման) պահպանումը: Պետք է կարողանալ այն հսկել: Դրա համար նախատեսված են հեշտացված պայմաններում, փոքր ծանրաբեռնվածություններով ու ոչ մեծ արագությամբ գործողության կատարման և մի շարք այլ մեթոդական հնարքներ:

Ուսուցման նախնական փուլի տևողությունը պայմանավորված է ուսուցանվողի ֆիզիկական և շարժողական պատրաստականությամբ, գործողության տեխնիկայի բարդությամբ, անհատական առանձնահատկություններով(այդ թվում նախնական բազի կարողությունների և հնտությունների առկայությամբ և նրանց դրական փոխադրումով), ուսուցման կազմակերպման օղակով(միևնույն շարժողական գործողության ուսուցումը համրակրթական դպրոցում կարող է լինել շատ կարճատև, օրինակ՝ 1-2 դասաժամ, իսկ մարզան ընթացքում 1-2 տարի):

Նախնական ուսուցման փուլում, որպես կանոն, նկատվում են շեղումներ շարժողական գործողության իրական ձևից:

Շարժողական գործողություններ կատարելիս սխալների ուրույն դասակարգում դեռևս չկա: Առավել հիմնավորված և լայն տարածում է գտնվ. Վելինովիչի կողմից առաջարկված դասակարգումը[14]:

1. Սխալներ կոնկրետ շարժողական գործողություն կատարելիս (օրինակ՝ անկյուն պահելիս ոտքերի ծալվելը ծնկան հոդամասում) և ընդհանուր սխալներ (օրինակ՝ գլխի ծիցու դիրք ընդունելը ընդհանուր պատրաստության վարժություններ կատարելիս):

2. Առանձին և համալիր սխալներ: Առանձին սխալներ, որոնք կոպիտ չեն, կարող են առաջանալ ուսուցման սկզբում, որոնք կարող են բացասական ազդեցություն չունենալ ուսուցման որակի վրա: Գործնթացում ավելի շատ հանդիպում են համալիր սխալները: Դա պայմանավորված է նրանով, որ շարժողական գործողության կառուցվածքում առանձնացվում են բազմաթիվ շարժումներ, իսկ յուրաքանչյուր սխալ պատճառ է դառնում մյուսների համար:

3. Զավտոմատացված և ավտոմատացված սխալներ:

Զավտոմատացված սխալների հաճախ հանդիպում ենք շարժողական գործողության ուսուցման սկզբում: Դրանք վերացնելը մանկավարժական գործնթացում այնքան էլ դժվար չէ, եթե ծիցու է ընտրված ուսուցման մնաթորիկամ: Երբ շարժումները սխալներով կրկնվում են բազմաթիվ անգամ, առաջ են գալիս ավտոմատացված սխալները: Դրանք ցանկալի չեն, քանի որ հետագայում դժվար են ուղղվում: Այդ սխալների վերացման համար որպես մերողական հնարք երենման ժամանակավորապես ընդհատում են տվյալ գործողության ուսուցումը, մինչև որ գլխուղեղում ծևավորված սխալ կոռորդինացիոն կապերը որոշ չափով «քանդվում» են, ինչից հետո անհրաժեշտ է նոր ծևով մուտենալ տվյալ շարժողական խնդրի լուծնանը:

4. Էւկան և ոչ էւկան սխալներ:

Այսպիսի սխալները լինում են «կոպիտ» կամ «տարրական»: Կոպիտ սխալներ են շարժողական գործողություն կատարելիս նկատվող ավելորդ, ոչ անհրաժեշտ շարժումները, որոնք շեղվում են հիմնական տեխնիկայից կամ շարժումների հիմնական ուղղվածությունից և ամպիտուրայից, խախտում են շարժման ռիթմը, առաջացնում են ավելորդ մկանային լարվածություն և այլն: Կոպիտ սխալները բնական երևույթ են, քանի որ պայմանավորված են շարժման սկզբնական ծևավորման օրինաչափություններով: Այս խումբ սխալներն անհրաժեշտ են հնարավորինս արագ վերացնել, քանի որ

## ՄԵԽՐՈԴ ՄԱՀՏՈՅ ՀԱՍԱՍԱՐԱՆԻ ԼՐԱՏՈՒ 2018

Դրանք խիստ բացասական են ազդում ուսուցման գործընթացի վրա: Ինչ վերաբերում է տարրական սխալներին, դրանք պետք է վերագրել ոչ թե շարժողական գործողությանն ամբողջությամբ, այլ՝ նրա առանձին մասերին:

### 5. Տիպիկ և ոչ տիպիկ սխալներ:

Տիպիկ են այն շարժողական սխալները, որոնք ավելի հաճախ են հանդիպում ուսուցման գործընթացում: Նման սխալները փարձառու մանկավարժը կանխատեսում է վաղորդը, որովհետև դրանք ունեն իրենց պատճառները: Դիմականում դրանք պայմանավորված են վարժվողի ուսուցման խնդրի ոչ ճիշտ ընկալումով, շարժողական հատկությունների ոչ բավարար մակարդակով կամ էլ նրանց սխալ համագործակցությամբ, սեփական կարողությունների հանդեպ ունեցած վստահությամբ, մկանախմբերի հոգնածությամբ, մարզագույքով և այլն:

Որպես կանոն նախնական ուսուցման փուլում վարժվողի անկարողությունն առաջ է բերում օրգանիզմի արագ հոգնածություն, ուստի կարող հանգանանք է բերն վածության ճիշտ չափավորումը: Մասնագետներն առանձնացնում են հետևյալ բաղադրիչները.

1. Շարժողական գործողության կրկնությունների քանակը: Ինչպիսին էլ լինի ուսուցումը, կրկնություններն ունեն իրենց սահմանները: Կրկնություններով պայմանավորված է վարժությունների արդյունավետությունը: Պետք է գիտակցել, որ կարծրատիպային կրկնությունները, մանավանդ, երբ առկա է որևէ սխալ, կարող են բացասաբար ազդել շարժողական գործողության որակի վրա: Դենց վերջինն էլ կարող է ազդանշան հանդիսանալ վարժությունների միջև հանգստի ընդմիջումների: Բացի դրանց մի շարք կրկնություններից հետո անհրաժեշտ է դադար առնել և արդյունքները մտովի վերլուծել:

Շարժողական գործողությունների կրկնությունների քանակը պայմանավորված է ուսուցման խնդիրներով, ուսուցանվող նյութի բարդություններով, վարժվողի ֆիզիկական պատրաստության մակարդակով, բնածին օժտվածությամբ, գործառությային ու բարոյականային հատկանիշների դրսերման հնարավորություններով, ուսուցման գործընթացի ժամաքանակով և մի շարք այլ գործողություններով:

Շարժողական գործողությունների կրկնությունն իր տեղի ունի նաև ուսուցման մյուս փուլերում:

2. Շարժողական գործողությունը կատարելիս մոտեցումների միջև ընկած հանգստի ընդմիջումները:

Կարծրությունները չափավորելիս կարևոր է յուրաքանչյուր փորձից (մոտեցումից մոտեցում) հանգստի ընդմիջումների ճիշտ ընտրությունը: Դրանով է պայմանավորված ուսուցանվողի օրգանիզմի ոչ միայն օրգանական համակարգերի, այլ նաև հոգեկան, հոլովական, ինտելեկտուալ վերականգնումը: Թեև ուսուցանվող գործողության բարդությունը պահանջում է հանգստի երկարատև ընդմիջումներ, սակայն, բոլոր դեպքերում անհրաժեշտ է պահպանել օրգանիզմի ֆիզիկական ակտիվության բարձր մակարդակը: Դանգստի ընդմիջումների ճիշտ կարգավորումով է պայմանավորված ուսուցման գործընթացի արդյունավետությունը, քանի որ առանց օրգանիզմի վերականգնման բազմաթիվ կրկնություններն առաջացնում են անցանկալի հոգնածություն, ինչը բացասաբար է ազդում կարողությունների և հմտությունների ձևավորման վրա:

3. Ուսուցման այս փուլում պարապունքների միջև ընկած ընդմիջումները պետք է լինեն ոչ երկարատև, քանի որ ծեռքը բերված կարողություններն անհրաժեշտ է պահպանել: Երկարատև ընդմիջումները, ինչպես արդեն նշել ենք, կարող են բացասաբար ազդել ծեռքը բերված շարժողական ռեֆլեքսների վրա: Փորձը ցույց է տալիս, որ ուսուցման գործընթացի արդյունավետությունը պայմանավորված է պարապմունքների հաճախաբեպությամբ և ոչ մեծ ծավալով:

Շարժողական հմտությունը կարավարելիս անհրաժեշտ է հաշվի առնել, որ յուրաքանչյուր աշակերտ ուսուցման այս կամ այն փուլում ունի որոշակի հնարավորություն, որով էլ կարողանում է լուծել տարրեր բարդության որոշակի շարժողական խնդիրներ:

## ՄԵՍՐՈՊ ՄԱՆՏՈՎ ՀԱՍԱՍՏԱՐԱՆԻ ԼՐԱՏՈՒ 2018

Ուստի մանկավարժական գործընթացում անհրաժեշտ է ապահովել մատչելիության և անհատականացման սկզբունքը: Եթե որևէ շարժողական գործողություն բարդ է և վարժվողը դժվարանում է այն բազմաթիվ անօան կրկնել, ապա անհրաժեշտ է որոշ ժամանակով դադար առնել, այնուհետև օժանդակ միջոցներով մեծացնել վարժվողի կորորդինացիոն հնարավորությունները, այնուհետև անդրադառնալ տվյալ վարժության կատարմանը:

Այսպիսով շարժողական գործողությունների ուսուցումը մանկավարժական գործընթաց է, ինչը նշանակում է, որ ուսուցման հիմնահարցերը լուծելիս անհրաժեշտ է առաջնորդվել մանկավարժության սկզբունքներով և դրույթներով: Անեն մի շարժողական գործողություն ունի իր մեխանիզմը, ուստի անհրաժեշտ է այն հմաստավորել ինչպես ամբողջությամբ, այնպես էլ նրա առանձին մասերը: Խոսքի և գործողության ցուցադրման հիմնական մեթոդների միջոցով է հնարավոր ուսուցանվողի գիտակցությանը հասցնել ուսուցանվող գործողության նպատակը, խնդիրները և առաջացնել հետաքրքրությունները [15]:

Եզրակացնելով, որ ֆիզիկական դաստիարակության գործընթացում ուսուցման վերջնական արդյունքը ֆիզիկական կրթությունն է, կարևորել ենք ուսուցման մեթոդիկան: Այդ համատեքստում հատկանշել ենք սեփական շարժումները կառավարելու աշակերտի ընդունակությունները, մասնավորապես՝ տեսադրության միջոցով հսկողությունը և մկանային զգացողությունը, որոնք պահանջում են նպատակառուղված աշխատանք: Ներկայացնելով շարժողական գործողությունների ուսուցումը մանկավարժության մի շարք մեթոդներով հանգել ենք այն կարծիքին, որ գործընթացն ավելի դյուրին կլինի, եթե ուշադրություն դարձվի ուսուցանվողի «պահանջներին»՝ ինչպես ֆիզիկական, այնպես էլ հոգեբանական տեսանկյունից: Ավելին՝ հետևելով աշակերտին ուսուցանելու մեխանիզմներին՝ հնարավոր է մշակել կամ կիրառել ուսուցումը դյուրացնելու և արդյունավետությունը բարձրացնելու այլ մեթոդներ [16]: Մեր երկրի շահը պահանջում է դպրոցում զարգացնել աշակերտների ուժային և արագառնամատական ընդունակությունները: Յետամտելով ֆիզիկական կուլտուրայի հիմնական նպատակներին՝ անհրաժեշտ է պատաճներին նախապատրաստել հայրենիքի պաշտպանությամբ և ամրապնել նրանց առողջությունը ծնողներից ժառանգած շարժողական ընդունակությունները զարգացնելու միջոցով:

## ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆ

- Գևորգյան Լ. Գ., Միջին մասնագիտական ուսումնական հաստատություններում ֆիզիկական դաստիարակության հիմնախնդիրների լուծումը մանկավարժական տեխնոլոգիաների միջոցով.- ԺԳ.00.01 - «Մանկավարժության տեսություն և պատմություն» մասնագիտությամբ մանկավարժական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության սեղմագիր, Եր., 2015:
- Նույն տեղում, էջ 19:
- Արյունյան Ս. Ա., Այրապետյան Ս. Ի., Ֆизическая культура как системообразующий фактор здорового образа жизни населения Нагорно-Карабахской республики.- Сборник научных статей 41-ой международной конференции, Армянский государственный институт физической культуры, Ер., 2014, стр. 396-400:
- Белинович В. В., Обучение в физическом воспитании, М., Физкультура и спорт, 1958:
- Տես նույնը:
- Сеченов И. М., Очерк рабочих движений человека, М., 1901, с. 139:

## **ՄԵՐՐՈԴ ՄԱՀՏՈՅ ՀԱՍԱՍԱՐԱՆԻ ԻՐԱՍՈՒ 2018**

7. Лесгафт П. Ф., Руководство по физическому образованию / Собр. пед. сочинений. Т. 2, М., ФиС, 1952, стр. 110, Лесгафт П. Ф., Избранные педагогические сочинения, М., Педагогика, 1988, Донской Д. Д., Развитие идей П. Ф. Лесгафта о физическом упражнении как двигательном действии// Теория и практика физической культуры, 1997, № 3, с. 2-4, Чаурина Р. А., Физкультура и Лесгафт// Спорт в школе, 2003, № 2, стр. 22-23:
8. Տես Ղազարյան Ֆ. Գ., Դպրոցականների շարժողական հատկությունների մշակման առանձնահատկությունները ֆիզիկական կուլտուրայի դասերին, Եր., «Լույս», 1981:
9. Գևորգյան Լ. Գ., Նշվ. աշխ., էջ 13:
- 10.Ղազարյան Ֆ. Գ., Մարդու շարժողական ընդունակությունները, Ե., 1992, Գրիգորյան Գ. Գ., Դպրոցականների շարժողական ներդաշնակության ապահովման ուղիները.- Սպորտային մանակավարժական գիտություն: 43-րդ միջազգային գիտաժողովի նյութերի ժողովածու, Ֆիզիկական կուլտուրայի հայկական պետական ինստիտուտ, Եր., 2016, էջ 99:
- 11.Смбатян В. А., Джавахян В. Л., Исследование показателей динамики развития двигательных качеств 12-13 летних школьников-юношес и девушек, занимающихся легкой атлетикой. Сборник научных статей 41-ой международной конференции, Армянский государственный институт физической культуры, Ер., 2014, стр. 461-465:
- 12.Полиевский С. А., Стимуляция двигательной активности, М., 2006, Ավագյան Յ. Յու., Տեսական գիտելիքների կարևորությունը ֆիզիկական կուլտուրայի դասերին.- Միջազգային 41-րդ համաժողովի գիտական հոդվածների ժողովածու, Ֆիզիկական կուլտուրայի հայկական պետական ինստիտուտ, Եր., 2014, էջ 63-66:
- 13.Матвеев Л. П., Теория и методика физической культуры (Общие основы теории и методики физического воспитания: теоретико-методические аспекты спорта и профессионально-прикладных форм физической культуры): Учебник, М., Физкультура и спорт, 1991:
- 14.Белинович В. В., Ук. книга:
- 15.Чатинян А. А., Научно-методические основы совершенствования точности двигательных действий: Автореф. ... доктора пед. наук по спец.: 13.00.02-«Методика преподавания и воспитания» (физическая культура), Ер., 2008:
- 16.Դմբադեկան Ռ. Մ., Սելումյան Ն. Վ., Մարմնամարզությունը դպրոցում, Ուսումնական ձեռնարկ, Եր., 2013, Վարոյան Ա. Ա., Շարժախաղերը հանրակրթական դպրոցում, Եր., 2008:

### **ԱՄՓՈՓԱԳԻՐ**

**Շարժողական գործողությունների ուսուցման մի քանի առանձնահատկությունների  
մասին**  
**Սերգեյ Գրիգորյան**

Հանրակրթական դպրոցների ֆիզկուլտուրայի ուսուցիչներին անհրաժեշտ է իմանալ շարժողական գործողությունների ուսուցման մեթոդիկայի ու կիրառման առանձնահատկությունները:

Դպրոցականների առողջ ապրելակերպի, հատկապես՝ աճող օրգանիզմի բնականոն զարգացման տեսակետից պահանջված է նրանց շարժողական գործառույթների զարգացումը:

Շարժողական գործողությունների ուսուցման գործընթացի ընդհանուր և մասնագիտական առանձնահատկությունները բխում են ուսուցման կրնկրես խնդրից, ուսումնական նյութի մատուցման և յուրացման ունակություններից, դասավանդման մեթոդիկայից:

## РЕЗЮМЕ

### О некоторых особенностях обучения двигательным действиям

Сергей Григорян

**Ключевые слова:** действия, двигательная ловкость, двигательное умение, обучение, методика преподавания, физическое воспитание, физическая нагрузка, упражнения

Учителям физкультуры общеобразовательных школ необходимо знать особенности методики обучения и применения двигательных действий.

С точки зрения здорового образа жизни школьников, особенно для нормального развития растущего организма, необходимо развитие их **двигательных функций**.

Общие и профессиональные особенности процесса обучения двигательным действиям вытекают из конкретной задачи обучения: подачи учебного материала и навыков усвоения, методики преподавания.

## SUMMARY

### About Some Peculiarities of Teaching Training Activities

Sergey Grigoryan

**Keywords:** training skills, training activities, mobility, teaching, teaching methodology, physical education, physical loading, exercises.

The teachers of Physical Education of secondary schools need to know the peculiarities of teaching methodology of training activities and practicing techniques.

From the point of view of the normal development of schoolchildren's healthy lifestyle, especially for the growing organism, the development of their movable functions is required.

The general and professional peculiarities of the mobility curriculum are derived from the specific problem of learning, teaching and learning abilities of the teaching material, teaching methodology.